

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ

5-14.19.01 «ԿԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ

5-14.19.01.04-3 «ԴԵՐՁԱԿ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՍՈՂՈՒԼԱՑԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2014

1	Մասնագիտության հիմունքներ		3,4 տ.		72	36	36				30	42		
2	Ձեռքի և մեքենայի կարատեսակներ		3,4 տ.		54	8	46				24	30		
	ԸՆԴԱՄԵՆԸ				126	44	82				54	72		
4.	Հատուկ մասնագիտական													
1	Մանր մասնիկների մշակում		3 տ.		36	6	30				36			
2	Գրպանների մշակում		3 տ.		36	6	30				36			
3	Աստառի մշակում		4 տ.		18	2	16					18		
4	Անդրավարտիքի մշակում		4 տ.		40	4	36					40		
5	Վերնաշապիկի մշակում		4 տ.		36	4	32					36		
6	Կիսաշրջագգեստի մշակում		3 տ.		22	2	20				22			
7	Խալաթի (շրջագգեստի) մշակում		4 տ.		36	8	28					36		
8	Պիջակի մշակում		3,4 տ.		144	12	132				62	82		
9	Մանկական շրջագգեստի մշակում		3 տ.		22	4	18				22			
	ԸՆԴԱՄԵՆԸ				390	48	342				178	212		
5.	ԸՆՏՐՈՎԻ				72						72			
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ				46						8	38		
	ԸՆԴԱՄԵՆԸ				1116	420	564				540	576		
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				100									
	Շաբաթվա ժամերի քանակը										36	36		

IV. ՆԱԽԱՄԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱԺԵՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ	
1	Հազուստի ոճերի պատմություն				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ	
2	Հազուստի հանգույցների մշակման նոր մեթոդներ			1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների	
				2	Օտար լեզվի	
				3	Հազուստի նյութերի, կարի արտադրության տեխնոլոգիայի	
				4	Հազուստի մոդելավորման և նախագծման	
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	5	Արտադրության սարքավորումների	
1	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	5	1	6	Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների	
2	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	5,6	4	7		
3	Նախաավարտական, արտադրական պրակտիկա	6	2	8		
				9		
			7		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ	
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ					Հազուստի նյութերի	
				2	Համակարգչային տեխնիկայի	
						ԱՐՇԵՍՏԱՆՈՑՆԵՐ
				1	Կարի արհեստանոց	
				2		
						ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Մարզադահլիճ	
				2	Մարզահրապարակ	

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է հաստատության խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է հաստատությունը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է հաստատության ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը հաստատությունը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է հաստատությունը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը	ԱՀ-Հ-3-14-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել պարապմունքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 22 ժամ Գործնական պարապմունք՝ 14 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար, 2) Կիրառում է ուղղակի հաղորդակցման ձևերը, 3) Կիրառում է անուղղակի հաղորդակցման ձևերը, 4) Կարողանում է ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում, 5) Ունակ է խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունական գործընկերության համար:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները,

	<p>4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,</p> <p>5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով:</p> <p>Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում է հնարավորությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով:</p> <p>Ուսուցման ընթացքում բերվում են իրական պարապմունքային փորձի օրինակներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կիրառում է ուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը, 2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին, 3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք, 4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է, 5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով:</p> <p>Ուսանողին կհանձնարարվի որոշակի զրույցի թեմա և բանավեճային հարցեր: Նա պետք է կարողանա հստակ կերպով վարի զրույցը, արձագանքի հարցադրումներին, մասնակցի բանավեճերին, ստեղծի բանավեճերի համար հետաքրքիր միջավայր:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ

	մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում` 6 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կիրառում է անուղղակի հաղորդակցման ձևերը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը, 2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք` պահպանելով նպատակայնությունն ու էթիկան, 3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները` նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար, 4) կազմում է գրություններ` ըստ հասցեատիրոջ և նպատակի, 5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր, 6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի, 7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ` հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես` հարց ու պատասխանը, թեստերը), նպատակա-հարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում` ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% շգրտությամբ կատարում է հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված	Տեսական ուսուցում` 2 ժամ

Ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Կարողանում է ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) նախաձեռնում է անձնական և պարապմունքային շփում՝ ըստ իրավիճակի և գրուցակցի կամ հաստատիրոջ, 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը, 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար, 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար, 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ, 6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվի գործնական պարապմունքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, գրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի պարապմունքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես՝ հարց ու պատասխանը և թեստերը), նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ունակ է խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար

Կատարման չափանիշներ	<p>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</p> <p>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</p> <p>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</p> <p>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական պարապմունքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվի իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ, սցենարներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱՍՕ-3-14-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել պարապմունքային գործունեության ընթացքում և կենցաղում

	անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և պարապմունքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 24 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնել պարապմունքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները 2) Կազմակերպել կենցաղը և պարապմունքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան 3) Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ 4) Ցուցաբերել առաջին օգնություն
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել պարապմունքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը, 2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, 4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, 5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները, 6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեսթերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման անհրաժեշտության և չպահպանելու դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել

	<p>անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:</p> <p>Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները`</p> <ol style="list-style-type: none"> 1) անվտանգության հիմնական կանոնները` ըստ տարբեր մասնագիտական աշխատատեղերի, 2) տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը 3) հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը 4) էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը, 5) կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները: <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում` 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք` 2 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Կազմակերպել կենցաղը և պարապմունքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է մարդու առողջության և պարապմունքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական), 2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն) 3) ներկայացնում է պարապմունքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը, 4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները,
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ</p>

	<p>նորմերի և դրանց պահպանման պահանջների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ պարապմունքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները, 2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման պարապմունքները, 3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) պարապմունքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները, 4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված պարապմունքային պայմանների ապահովման և կոնկրետ վտանգի կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Կառաջադրվի կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումներ բաղադրիչները: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր,</p>

	մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 2 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Ցուցաբերել առաջին օգնություն
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին, 2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում, 3) կատարում է արհեստական շնչառության և սրտի պարապմունքի վերականգնման գործողություն, 4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն, 5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ, 6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կոտրվածքների դեպքում, 7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցադրել (անհնարինության դեպքում՝ նկարագրել) առաջին օգնության գործողություններ՝ ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր, մասնավորապես՝ հարց ու պատասխանը, թեստերը, նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ էլնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»	

Մոդուլի դասիչը	ԱՀ-ԱԳՀ-3-14-001
Մոդուլի նպատակը	Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրագրվածության բարձրացմանը, պարապմունք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, պարապմունքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ պարապմունքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած պարապմունքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական պարապմունք՝ 26 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	1) Ունակ է փնտրել և գտնել պարապմունք 2) Կարողանում է հարմարվել պարապմունքային միջավայրին, ապահովել պարապմունքային դրական մթնոլորտ 3) Ունակ է արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը 4) Ներկայացնել պարապմունքում հաջողության հասնելու նախապայմանները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	1) Ունակ է փնտրել և գտնել պարապմունք 2) Կարողանում է հարմարվել պարապմունքային միջավայրին, ապահովել պարապմունքային դրական մթնոլորտ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է պարապմունքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները, 2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական, աշխատատեղը(երը)՝ օգտագործելով պարապմունքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, 3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), 4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,

	5) ներկայացնում է պարապմունքի ընդունվելու, պարապմունքի փոփոխության և պարապմունքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:
Գնահատման միջոցը	Ձեռք բերումը գնահատվում է հարց ու պատասխանի և գործնական կատարման հիման վրա: Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե սովորողը ճիշտ է պատասխանում հարցերին, ճիշտ է ներկայացնում պարապմունքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները: Կարողանում է հիմնավորել պարապմունքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, ճիշտ է կազմում ինքնակենսագրություն (CV), մանրամասնորեն ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում այն, ճիշտ է կազմում պարապմունքի ընդունման և պարապմունքից ազատման դիմումները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ համապատասխան մասնագիտական գրականություն, իրավական ակտերի օրինակներ: Կազմակերպվում են դերային խաղեր, կիրառվում են ձևաչափեր, տեսաֆիլմեր, այլ դիդակտիկ նյութեր
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում` 4 ժամ Գործնական պարապմունք` 6 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կարողանում է հարմարվել պարապմունքային միջավայրին, ապահովել պարապմունքային դրական մթնոլորտ
Կատարման չափանիշներ	1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները, 2) հիմնավորում է տվյալ պարապմունքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը, 3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ, 4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ, 5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր պարապմունքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և պարապմունքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի պարապմունքային

	<p>պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ պարապմունքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում` 2 ժամ Գործնական պարապմունք` 8 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ունակ է արդյունավետ աշխատել թիմում` պահպանելով էթիկայի նորմերը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը, 2) ներկայացնում է թիմային պարապմունքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները, 3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ` ըստ նրանց վարքագծի դրսևորման, 4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում, 5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման, թիմային պարապմունքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կատեղծվի պարապմունքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը, որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի պարապմունքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց</p>

	<p>իրավիճակներում՝ պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողը առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ: Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհագալից վերաբերմունքը, պարապմունքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունները, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 4</p>	<p>Ներկայացնել պարապմունքում հաջողության հասնելու նախապայմանները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) բացատրում է պարապմունքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը պարապմունքային հաջողությունների հասնելու գործում, 2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը պարապմունքային հաջողությունների հասնելու գործում, 3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը պարապմունքային հաջողությունների հասնելու գործում, 4) ներկայացնում է պարապմունքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր պարապմունքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը</p>

	կղիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:
Ուսուցման ժամանակահատված	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Մ Ո Ղ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը « Հ Ա Մ Ա Կ Ա Ր Գ Չ Ա Յ Ի Ն Օ Պ Ե Ր Ա Տ Ո Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն »	
Մոդուլի դասիչը	ԱՀ-ՀՕ-3-14-001
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, պարապմունքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 28 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Տիրապետում է համակարգչային տեխնիկային և օպերացիոն համակարգի կիրառմանը 2) Կարողանում է տեքստերը խմբագրել և ֆորմատավորել 3) Կարողանում է պատրաստել խմբագրել աղյուսակները 4) Կարողանում է կատարել գրաֆիկական խմբագրում և նկարագարում 5) Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով 6) Կարողանում է աշխատել համացանցում

Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Տիրապետում է համակարգչային տեխնիկային և օպերացիոն համակարգի կիրառմանը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին, 2) տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին, 3) տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից (printer, scanner, projector, fax, պատճենման սարք և այլն), 4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը, 5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (microsoft office), 6) կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը, 7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից, 8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում, 9) կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print):
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները՝ համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն առնվազն 3 հիմնական ծրագրում կատարել նույն գործողությունը. թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ տեխնիկական սարքեր:

Ուսուցման ժամաքանակը երաշխավորված	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կարողանում է տեքստերը խմբագրել և ֆորմատավորել
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար, 2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ, 3) կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, 4) կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտողային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից, 5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու տեքստը հավելելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման ժամաքանակը երաշխավորված	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կարողանում է պատրաստել խմբագրել աղյուսակները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստել դրանք, 2) կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ, 3) կատարում է ուղղումներ ու լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյուներ և այլն), 4) փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում, 5) ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների մեջ:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի

	<p>նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ՝ առնվազն 2 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական ործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	<p>Գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 4	<p>Կարողանում է կատարել գրաֆիկական խմբագրում և նկարագարում</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ, 2) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը, 3) գծագրում է կանոնավոր պատկերներ, 4) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով, 5) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները, 6) գծագրում է տեքստային բլոկներ, 7) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ, կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ՝ առնվազն 3 հիմնական ծրագրում կատարելով նույն գործառույթը:</p> <p>Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Ուսումնառության արդյունք 5	Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը, 2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ, 3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով, 4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար, 5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:
Գնահատման միջոցը	Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը ըստ առաջադրանքի՝ նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով : Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում ցուցադրումը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 6 ժամ
Ուսումնառության արդյունք 6	Կարողանում է աշխատել համացանցում
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ներկայացնում է « համացանց » հասկացությունը, 2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը, 3) ներկայացնում է History, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forward կոճակների նշանակությունը, 4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից), 5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,

	<p>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում , ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</p> <p>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա (հաղորդագրություն, նամակ և կցորդ):</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթա հնարավոր հարցերը: Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր՝ փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել, օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Ուսումնառության ընթացքում կիրառվում է տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:</p>
Ուսուցման ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 4 ժամ</p>

**ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԿՐԹՈՒԹՅԱՆ 5-14.19.01 «ԿԱՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
5-14.19.01.04-3 ԴԵՐՁԱԿ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՂՈՒԼՆԵՐ**

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԿԱՏԴ 3-14-001
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հագուստի նյութերի, հագուստի մոդելավորման և նախագծման, հագուստի պատրաստման վերաբերյալ անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ
Մոդուլի տևողությունը	72 ժամ Տեսական ուսուցում` 36 ժամ Գործնական պարապմունք` 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելուց առաջ պետք է ուսումնասիրել ԱՀ-ԱՍՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Ներկայացնել դերձակի զբաղմունքի նկարագիրը, անհատական և մեքենայական արտադրամասում պարապմունքի կազմակերպման առանձնահատկությունները 2) Ներկայացնել կարի արտադրության գործում կիրառվող գործվածքների, լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի հատկությունները, դրանց օգտագործման բնագավառները 3) Ներկայացնել մարդու մարմնի չափային հատկանիշները, կատարել մարդու մարմնի չափում 4) Ներկայացնել հագուստի նախագծման սկզբունքները
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել դերձակի զբաղմունքի նկարագիրը, անհատական և մեքենայական արտադրամասում պարապմունքի կազմակերպման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում դերձակի զբաղմունքի նկարագիրը, 2) ճիշտ է կահավորում աշխատատեղն այնպես, որ օգտագործվող պարագաները չխանգարեն պարապմունքային

	<p>գործընթացին,</p> <p>3) տարբերակում է կարի արտադրամասի սարքավորումների տեսակները:</p>
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատվում է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողը պետք է ճիշտ ներկայացնի դերձակի զբաղմունքը, բնութագրի կարի արտադրամասի սարքավորումների տեսակները, ճիշտ կահավորի դերձակի աշխատատեղը, անհրաժեշտ պարագաները և գործիքները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար. եթե հարցերին տալիս է ճիշտ պատասխան և ճիշտ է կահավորում դերձակի աշխատատեղը:</p> <p>Ստորև բերվում են դերձակի զբաղմունքի որոշ մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • Հագուստի կարում տարբեր գործվածքներից և նյութերից • Պատվիրած հագուստի նորոգում և ձևափոխում • Աշխատատեղի կահավորում համապատասխան սարքավորումներով և պարագաներով, սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում • Մեքենաների աշխատանքային վիճակի ապահովում
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	<p>Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, կարի մեքենաների պլակատներ, դերձակի աշխատատեղի կահավորման անհրաժեշտ գործիքներ, պարագաներ:</p>
Ուսուցման ժամաքանակը երաշխավորված	<p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 4 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 2	<p>Ներկայացնել կարի արտադրության գործում կիրառվող գործվածքների, լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի հատկությունները, դրանց օգտագործման բնագավառները</p>
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) տարբերում է քիմիական, բնական, մանրաթելերից պատրաստված գործվածքները, 2) ճիշտ է ներկայացնում գործվածքների համեմատական բնութագրերը, 3) ճիշտ է ներկայացնում լրացուցիչ նյութերի, ֆուրնիտուրայի օգտագործման բնագավառներն ու սկզբունքները, 4) մոդելին համապատասխան՝ ճիշտ է ընտրում գործվածքը՝ հաշվի առնելով նորաձևության պահանջը, 5) մոդելին համապատասխան՝ ճիշտ է ընտրում օժանդակ նյութերը և ֆուրնիտուրան:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին տրվում են տարբեր</p>

	<p>գործվածքների նմուշներ: Նա պետք է ճիշտ տարբերի գործվածքները ըստ մանրաթելային բաղադրության, բնութագրի այն ըստ նշանակության: Տրված մոդելի էսքիզին համապատասխան ճիշտ ընտրի գործվածքը և լրացուցիչ նյութերը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե հարցերին պատասխանում է ճիշտ և գործնական պարապմունքը կատարում է կատարման չափանիշներին համապատասխան:</p> <p>Ստորև բերվում են գործվածքների հիմնական հատկությունները, որոնք անհրաժեշտ են հաշվի առնել նախագծման, ձևման, կարման հետագայում նաև կրման ժամանակ.</p> <ul style="list-style-type: none"> • Մեխանիկական հատկություններ - ամրություն, ծալազարդարում, ճմրթվելիություն, մաշակայունություն և այլն, • Ֆիզիկական հատկություններ - ջերմապաշտպանիչ, օդաթափանց և այլն, • Տեխնոլոգիական հատկություններ - սահունություն, թելերի թափվելիություն, մտնելիություն և այլն:
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ տարբեր գործվածքների նմուշներ, մոդելների ուրվանկարներ, տարբեր` նշանակության հագուստներով: Մասնագիտական գրականություն, գործնական պարապմունքի համար անհրաժեշտ պարագաներ:</p>
<p>Ուսուցման ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում` 12 ժամ</p> <p>Գործնական պարապմունք` 14 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 3</p>	<p>Ներկայացնել մարդու մարմնի չափային հատկանիշները, կատարել մարդու մարմնի չափում</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է օգտվում մարմնակազմության չափումների տիպային աղյուսակից, 2) ըստ նմուշի ճիշտ է կատարում մարդու մարմնի չափումները, 3) ճիշտ է կատարում համապատասխան հաշվարկները:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի հիման վրա: Ուսանողին կտրվի մարմնակազմության չափումների տիպային աղյուսակ: Նա պետք է ճիշտ կատարի մարդու մարմնի չափումները և համապատասխան հաշվարկները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է կատարել անհրաժեշտ բոլոր չափումները և հաշվարկները: Ստորև բերվում են մարմնակազմության չափումների վերաբերյալ որոշ մանրամասներ. որպես կանոն չափումները կատարվում են ներքին սպիտակեղեն կամ նուրբ ընդգրկված շրջազգեստ հագած, խիստ հորիզոնական դիրքով, գոտկագծի վրա քուղ կամ բարակ երիզ կապած: Չափերը վերցնելիս , չափող ժապավենը պետք է կիպ ընդգրկի մարմինը առանց ձգման:</p>

Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Տեսական ուսուցում, գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մարմնակազմության չափման աղյուսակներ, մանեկեններ, տարբեր տեսակի քանոններ, սանտիմետրաժապավեն և այլն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 10 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ
Ուսումնասության արդյունք 4	Ներկայացնել հագուստի նախագծման սկզբունքները
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հագուստի զարգացման պատմությունը, 2) ճիշտ է ներկայացնում հագուստի նախագծման հիմնական սկզբունքները:
Գնահատման միջոցը	Արդյունքի յուրացումը կատարվում է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի գնահատումը համարվում է բավարար, եթե նա ճիշտ է ներկայացնում հագուստի նախագծման հիմնական սկզբունքները: Ստորև բերվում են որոշ մանրամասներ հագուստի նախագծման հիմնական սկզբունքների վերաբերյալ. <ul style="list-style-type: none"> • Պատվիրատուի չափումների ճիշտ կատարում, հաշվի առնելով մարմնակազմական առանձնահատկությունները, • Համեմատում մարմնակազմության չափաչափի հատկանիշների հետ, • Հաշվարկների կատարում՝ հաշվի առնելով ազատ նստեցման հավելումները, • Կոնստրուկտիվ տեղամասերի նշում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նորաձևության ամսագրեր, պլակատներ, մոդելների ուրվանկարներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՔԻ ԵՎ ՄԵՔԵՆԱՅԻ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ԿԱՏԴ 3-14-002
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել հագուստ մշակելիս կիրառվող ձեռքի և մեքենայի կարատեսակներ կատարելու կարողություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ

	Տեսական ուսուցում՝ 8 ժամ Գործնական պարապմունք՝ 46 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԱՀ-ԱԱՕ-3-14-001 «Անվտանգություն և առաջին օգնություն», ԿԱՏԴ 3-14-001 «Մասնագիտական հիմունքներ» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	1) Կատարել ձեռքի կարատեսակներ 2) Կատարել մեքենայի կարատեսակներ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Կատարել ձեռքի կարատեսակներ
Կատարման չափանիշներ	1) մասնիկներին համապատասխան՝ ճիշտ է ընտրում կարատեսակը, 2) ճիշտ է պահպանում կարաբաժինները, 3) ճիշտ է կատարում ժամանակավոր և հիմնական նշանակության ձեռքի կարատեսակները, 4) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվեն գործվածքի նմուշներ և կպահանջվի կատարել տարբեր տեսակի ձեռքի կարեր: Ուսանողը պետք է կարողանա տարբերակել հիմնական և ժամանակավոր նշանակության ձեռքի կարատեսակները, բացատրել ձեռքի կարերի կիրառման բնագավառները, ճիշտ ընտրել ձեռքի կարերի համար կիրառվող գործիքները: Արդյունքի ձեռք բերումը կհամարվի բավարար, եթե սովորողը բոլոր կարատեսակները կատարի ճիշտ: Ստորև բերվում են ձեռքի կարերի կատարման տեխնիկական պայմանները <ul style="list-style-type: none"> • Ժամանակավոր նշանակության կարաշարքերը կատարվում են հիմնական գործվածքի գույնին համապատասխան՝ բամբակյա թելերով, • Բլանդը կատարվում է գծանշումից 1 սմ հեռավորության վրա, հետագայում մեքենայական կարաշարքի տակ ընկնելուց խուսափելու համար, • Ժամանակավոր նշանակության կարաշարքը հեռացվում է նախօրոք՝ կտրատելով 10-15 սմ երկարության վրա, դուրս քաշելով թելերը գործվածքից, • Մինչ մասնիկների բլանդումը անհրաժեշտ է մասնիկների եզրերը ամրացնել քորցնելով, կարաշարքի

	ուղղությամբ:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ գործվածքի նմուշներ, ասեղ, թել և ձեռքի պարապմունքների կատարման համար անհրաժեշտ բոլոր պարագաները
Ուսուցման ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Կատարել մեքենայի կարատեսակներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) կարատեսակին համապատասխան՝ ճիշտ է ընտրում կարի մեքենան, 2) ճիշտ է լիցքավորում կարի մեքենան, 3) ճիշտ է ընտրում կարերի տեսակները ըստ նշանակության և տեղամասերի 4) ճիշտ է կատարում մեքենայական կարատեսակները, 5) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Արդյունքի յուրացումը գնահատելու համար ուսանողին կտրվեն բանավոր հարցեր մեքենասարքավորումների տեսակների և նշանակության վերաբերյալ: Ուսանողին կհանձնարարվի կատարել մեքենասարքավորումների պարզ սպասարկման գործողություններ՝ մեքենայի թելում, մասրայի լիցքավորում, թելի ձգվածության կարգավորում, ասեղի և մաքոքի տեղադրում: Ուսանողին կհանձնարարվի աշխատել մեքենաների վրա՝ կատարելով տարբեր կարատեսակներ: Ստորև բերվում են մեքենայական կարերի դասակարգման որոշ մանրամասեր և մեքենայական աշխատանքներ կատարմանը ներկայացվող պահանջներ: Կարի տեսակները ըստ կարակույթերի հյուսման ձևի լինում են մաքոքային, շղթայական: Ըստ նշանակության լինում են միացման, եզրային և հարդարման: Մեքենայական կարերին ներկայացվում են հետևյալ տեխնիկական պայմանները.</p> <ul style="list-style-type: none"> • Մեքենայական կարերը կատարվում են եզրերից հավասար հեռավորության վրա, առանց կարակույթերի բաց թողման և ձգման: • Բլանդած մասնիկների կարումը մեքենայական կարաշարքով կատարվում է բլանդի կողքով: • Ներքին կարերի ծայրերին տրվում է ամրակար 7-10 մմ երկարությամբ, հետադարձ կարաշարքը հիմնականից գտնվում է 1 մմ հեռավորության վրա:

	<ul style="list-style-type: none"> Ներկարի կարակուրի երկարությունը՝ 2-3 մմ է կախված գործվածքի հաստությունից: <p>Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ հարցերին տրվում է ճիշտ պատասխան, մեքենայական կարերը ճիշտ է կատարում</p>
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Արդյունքի ուսուցանումը նպատակահարմար է կատարել կարի արհեստանոցում՝ ունենալով գործվածքի նմուշներ, մկրատ, թելեր և այլն:
Ուսուցման ժամաքանակը	<p>Երաշխավորված՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 38 ժամ</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԸ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԿԱՏԴ 3-14-003
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել զանգվածային և անհատական արտադրության մեջ կիրառվող մանր մասնիկների մշակման տեխնոլոգիայի կիրառման կարողություն:
Մոդուլի տևողությունը	<p>36 ժամ</p> <p>Տեսական ուսուցում՝ 6 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 30 ժամ</p>
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿԱՏԴ 3-14-002 «Ձեռքի և մեքենայի կարատեսակներ» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Հաշվարկել մանր մասնիկների նյութաձախսը 2) Տեղադրել շղթան, ձևել և մշակել օձիքը 3) Մշակել բազկակալ, ուսադիրներ, կափարիչներ և գոտիներ
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Հաշվարկել մանր մասնիկների նյութաձախսը
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ձևում մանր մասնիկները ըստ տրված ձևանմուշի,

	<p>2) ճիշտ է տեղադրում մանր մասնիկները գործվածքի վրա,</p> <p>3) ճիշտ է հաշվում մանր մասնիկների նյութի ծախսը,</p> <p>4) ճիշտ է հաշվարկում միջլեկալային թափվածքի մեծությունը,</p> <p>5) ռացիոնալ օգտագործում է ձևվածքի թափոնները:</p>
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Ուսանողին կտրվի լեկալների (ձևանմուշ) խումբ, որոնցով կձևի մանր մասնիկներ՝ բազկակալ, ուսադիր, գոտի, կափույր և այլն: Միաժամանակ գործվածքի վրա կդասավորի մանր մասնիկների լեկալները՝ նյութի ծախսի որոշման համար: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է ձևել մասնիկները, պահպանել է հենքի թելի ուղղությունը, հաշվի է առել գործվածքի արտաքին մակերևույթի տեսքը: Միևնույն ժամանակ արդյունավետ կերպով դասավորել է մանր մասնիկների լեկալները գործվածքի վրա:</p> <p>Ստորև բերվում է մասնիկների ձևման և նյութածախսի հաշվման որոշ մանրամասներ:</p> <p>Մասնիկների լեկալների դասավորման ժամանակ հաշվի է առնվում հենքի թելի և թուլատրելի շեղվածության ուղղությունը: Դասավորման ժամանակ հաշվի է առնվում մասնիկների պատկանելիությունը աջ և ձախ մասերին:</p> <p>Լեկալները դասավորվում են առանց գործվածքի լայնության եզրաշերտերի, շրջանակի մեջ:</p> <p>Լեկալները դասավորվում են խիստ արդյունավետ, փոքր միջլեկալային թափվածքով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ կլինի օգտագործել ուսումնական գրականություն, ձևանմուշներ, մշակված տիպային հանգույցներ, մկրատ և ձևման այլ պարագաներ: Գործնական պարապմունքը կատարվելու է կարի արհեստանոցում ձևասեղանների վրա:</p>
<p>Ուսուցման ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 6 ժամ</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Տեղադրել շղթան, ձևել և մշակել օձիքը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<p>1) ճիշտ է տեղադրում շղթաներ տարբեր տեղամասերի վրա,</p> <p>2) ճիշտ է ձևում օձիքներ ըստ տրված ձևանմուշի,</p> <p>3) ճիշտ է սահմանված ժամկետում մշակում է օձիքներ,</p> <p>4) մասնիկների պատրաստման հերթականությունը համապատասխանում է տեխնոլոգիական պահանջներին,</p>

	5) ճիշտ է ենթարկում վերջնական ջերմախոնավային մշակման:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կառաջադրվի ձևել և մշակել օձիք ըստ տրված ձևաձևի, տեղադրել շղթան հագուստի տարբեր տեղամասերում: Արդյունքի ձևաչափերումը համարվում է բավարար, եթե օձիքը ճիշտ է ձևել և կարման ընթացքում պահպանել է տեխնոլոգիական պարամետրերը: Շղթան ճիշտ է տեղադրել առաջադրված տեղամասերի վրա, կատարել է վերջնական հարդարման պարապմունքներ: Բացատրել է օձիքի կարման և շղթայի տեղադրման առանձնահատկությունները:</p> <p>Ստորև բերվում են մանր մասնիկների մշակման որոշ մանրամասներ.</p> <ul style="list-style-type: none"> • Օձիքի ծայրերի սիմետրիկության ապահովում • Օձիքի առանձին կիսամասերի միացման եզրերի հավասարություն • Օձիքի եզրային կանթի հավասարաչափ պահպանում • Շղթայի տեղադրման ժամանակ արտաքին զարդակարի հավասարության ապահովում
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձևաչափերումը կատարվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ կլինի օգտագործել ուսումնական գրականություն, մշակված օձիքների նմուշներ, լեկալներ, ձևված մասնիկներ շղթայի տեղադրման կամար, մկրատ և ձևման այլ պարագաներ: Գործնական պարապմունքը կատարվելու է կարի արհեստանոցում:
Ուսուցման ժամաքանակը	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ</p> <p>Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
Ուսումնառության արդյունք 3	Մշակել բազկակալ, ուսադիրներ, կափարիչներ և գոտիներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ և սահմանված ժամկետում մշակում է բազկակալներ, ուսադիրներ, կափարիչներ, գոտիներ, 2) ճիշտ է մշակում գոտու կամրջակները ըստ տրված տիպային նմուշի, 3) ճիշտ է ենթարկում վերջնական ջերմախոնավային մշակման, 4) պահպանում է անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	Ուսանողին կհանձնարարվի մշակել ձևված մասնիկների խումբ՝ բազկակալ, ուսադիր, գոտի, կափույր և ենթարկել վերջնական ջերմախոնավային մշակման: Նա պետք է ընտրի արդուկման ռեժիմը և պահպանի արդուկման

	<p>կանոնները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե նշված մանր մասնիկները ճիշտ է մշակել և հարդարել: Ճիշտ է բացատրել մշակման առանձնահատկությունները: Ստորև բերվում են մանր մասնիկների մշակման որոշ մանրամասներ:</p> <p>Մանր մասնիկները ունեն ֆունկցիոնալ և գեղագիտական նշանակություն: Նրանք ձևվում են ամբողջական /բազկակալ թերթիկ, ուսադիր,գոտի/ կամ երկու կիսամասերից /օձիք, կափույր ուսադիր/: Ամբողջական ձևված մասնիկների մշակման առանձնահատկությունները հետևյալն են. մասնիկները ծավլվում են կենտրոնից, երեսները դեպի ներս: Կիսամասերից մեկի վրա տեղադրվում է ձևապահպան միջադրվածք: Հավասարվում են եզրերը և կարվում եզրից 5-7 մմ հեռավորության կախված գործվածքի հաստությունից: Երկու կիսամասերից ձևված մասնիկների մոտ ձևապահպան միջադրվածքը տեղադրվում է հիմնականում տակի մասնիկն: Վերջնական ջերմախոնավայինմշակումը կատարվումէ եզրային կանթի հավասարաչափ պահպանումով:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ կլինի օգտագործել ուսումնական գրականություն, նորաձևության ամսագրեր: Գործնական պարապմունքը կատարվելու է կարի արհեստանոցում, որտեղ առկա են մանր մասնիկների մշակման և հարդարման սարքավորումներ:</p>
<p>Ուսուցման ժամաքանակը</p>	<p>Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 12 ժամ</p>
<p>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՐՊԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ»</p>	
<p>Մոդուլի դասիչը</p>	<p>ԿԱՏԴ 3-14-004</p>
<p>Մոդուլի նպատակը</p>	<p>Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել մասսայական և անհատական արտադրության մեջ կիրառվող գրպանների մշակման տեխնոլոգիայի կիրառման կարողություն:</p>
<p>Մոդուլի տևողությունը</p>	<p>36 ժամ Տեսական ուսուցում՝ 6 ժամ Գործնական պարապմունք՝ 30 ժամ</p>
<p>Մուտքային պահանջները</p>	<p>Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿԱՏԴ 3-14-003 «Մանր մասնիկների մշակում»</p>

	մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Ունակ է մոդելի էսքիզին համապատասխան ընտրել գրպանի չափերը, կատարել գործվածքի ծախսի հաշվարկ և ձևել գրպանի մասնիկները 2) Ունակ է մշակել գրպանների տարբեր տիպեր՝ հենքային դետալների կտրվածքներին և չրթվածքներին համապատասխան 3) Հավաքել գրպանը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ունակ է մոդելի էսքիզին համապատասխան ընտրել գրպանի չափերը, կատարել գործվածքի ծախսի հաշվարկ և ձևել գրպանի մասնիկները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է ընտրում գործվածքի հենքի թելի ուղղությունը, 2) Ճիշտ է տեղադրում գրպանի լեկալը գործվածքի վրա, պահպանում է հենքի թելի ուղղությունը, 3) գործվածքի ծախսի հաշվարկը ճիշտ է կատարում, 4) գրպանի մասնիկները ձևում է ըստ տրված տիպային նմուշի, 5) գործվածքն օգտագործում է ռացիոնալ, ճիշտ է հաշվարկում միջլեկալային թափվածքի մեծությունը:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվեն տարբեր տեսակի գրպանների լեկալներ և կառաջարկվի ձևել այն՝ պահպանելով հենքի թելի ուղղությունը, միաժամանակ նա դասավորելու է լեկալները գործվածքի վրա՝ նյութի ծախսի որոշման համար: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է ձևել գրպանները և լեկալների դասավորությունը գործվածքի վրա կատարել է ռացիոնալ ձևով:</p> <p>Ստորև բերվում են գրպանների ձևման որոշ առանձնահատկություններ:</p> <p>Ըստ դիրքի և մշակման եղանակի գրպանները բաժանվում են երեք խմբի.</p> <ul style="list-style-type: none"> • Վրադիր գրպաններ, • Կտրված գրպաններ, • Կարերի մեջ տեղադրված գրպաններ: <p>Գրպանի լեկալների դասավորության ժամանակ հաշվի է առնվում հենքի թելի և թույլատրելի շեղվածության</p>

	ուղղությունը: Դասավորությունը կատարվում է շրջանակի մեջ, գործվածքի լայնությունից հանելով եզրաշերտերի չափարը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ կլինի օգտագործել ուսումնական գրականություն: Տարբեր գրպանների տիպային նմուշներ, ձևանմուշներ, գործվածքի նմուշներ, մկրատ և ձևման այլ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 8 ժամ
Ուսումնառության արդյունք 2	Ունակ է մշակել գրպանների տարբեր տիպեր՝ հենքային դետալների կտրվածքներին և չրթվածքներին համապատասխան
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է կատարում տարբեր տեսակի գրպանների մշակումը, 2) պահպանում է կարման տեխնոլոգիական պարամետրերը՝ <ul style="list-style-type: none"> • 1սմ կարաշարքում կարակույթերի թիվը, • կարաշարքի հեռավորությունը եզրից, ասեղի և թելի համապատասխանությունը գործվածքի հաստությանը
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվի մշակել տարբեր գրպաններ ըստ տրված ձևածքի և բացատրել մշակման կանոնները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է մշակել բոլոր գրպանները, պահպանել է տեխնոլոգիական պարամետրերը՝ կարաշարքի հեռավորությունը եզրից 1սմ. կարաշարքում եղած կարակույթերի թիվը, ասեղի և թելի համապատասխանությունը գործվածքին: Վրադիր գրպանների մշակման ժամանակ սովորաթղթից կամ ամուր թղթից ձևվում են օժանդակ լեկալներ, որոնք երեք եզրերով , 10-15 սմ տարբերությամբ, ձևով և չափերով կրկնում են պատրաստի գրպանը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ կլինի օգտագործել ուսումնական գրականություն, գրպանների տիպային նմուշներ, պլակատներ, նորաձևության ամսագրեր: Գործնական պարապմունքը կատարվելու է կարի արհեստանոցում, որտեղ առկա են գրպանների մշակման համար անհրաժեշտ սարքավորումներ:
Ուսուցման երաշխավորված	Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Ժամաքանակը	Գործնական պարապմունք՝ 12 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Հավաքել գրպանը
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում կարատեսակները, 2) ճիշտ հերթականությամբ հավաքում է գրպանի մասնիկները, 3) ճիշտ է պահպանում կարման տեխնոլոգիական պարամետրերը, 4) ճիշտ է կատարում մասնիկների ջերմախոնավային մշակումը, 5) պահպանում է պարապմունքի անվտանգության կանոնները:
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվի տարբեր տեսակի նմուշներ, որոնց վրա հավաքելու է գրպաններ: Միննույն ժամանակ բացատրելու է գրպանների մշակման հաջորդականությունը: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է մշակել և հարդարել տարբեր գրպաններ: Մշակման գործընթացը բացատրելիս պետք է ճիշտ ներկայացնի մշակման առանձնահատկությունները: Ներկայացված նմուշների վրա վրադիր գրպանների տեղը նշվում է երեք գծով. մուտքի գիծ, ներքևի եզր և կողմնային եզրերից մեկը: Կտրված գրպանների մուտքը ձևավորվում է թերթիկով, կափույրով և գույգ շրջանակներով: Վրադիր գրպանները հավաքվում են կարման եզրերը ծավված վիճակում: Կտրված գրպանները հավաքվում են երեք փուլով.</p> <ul style="list-style-type: none"> • Մանր մասնիկների, թերթիկի, կափույրի, շրջանակի մշակում, • Գրպանի մուտքի կտրում, ձևավորում, • Գրպանապարկերի միացում, • Գրպանի վերջնական հարդարում:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Ուսուցման համար անհրաժեշտ կլինի օգտագործել ուսումնական գրականություն, գործվածքի նմուշներ, ձևանմուշներ, մշակված հանգույցներ: Գործնական պարապմունքը կատարվելու է կարի արհեստանոցում:
Ուսուցման ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՍՏԱՌԻ ՄՇԱԿՈՒՄ»

Մոդուլի դասիչը	ԿԱՏԴ 3-14-005
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել զանգվածային և անհատական արտադրության մեջ օգտագործվող աստառների մշակման տեխնոլոգիայի կիրառման կարողություն:
Մոդուլի տևողությունը	18 ժամ Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 16 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿԱՏԴ 3-14-002 « Ձեռքի և մեքենաների կարատեսակները» մոդուլը:
Ուսումնառության արդյունքները	1) Ընտրել գործվածքը և ձևել աստառը 2) Մշակել աստառը՝ համաձայն մոդելի 3) Կատարել աստառի վերջնական ջերմախոնավային մշակում
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Ընտրել գործվածքը և ձևել աստառը
Գնահատման միջոցը	<p>Ուսանողին կտրվի տարբեր բաղադրության և արտաքին տեսքի գործվածքներ, որոնցից կառանձնացվեն աստառի խմբի գործվածքները և ըստ տրված ձևանմուշի կձևի տարբեր արտադրատեսակների աստառներ: Միևնույն ժամանակ կբացատրի է աստառի խմբի գործվածքներին ներկայացվող պահանջները և կարման առանձնահատկությունները: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է ընտել աստառացու գործվածքը և ճիշտ է ձևել տարբեր արտադրատեսակների աստառները: Ստորև բերվում են աստառացու գործվածքներին ներկայացվող որոշակի պահանջներ:</p> <p>Աստառի խմբի գործվածքները սահուն են, փայլուն մակերևույթով, ամուր ներկված են, ունեն փոքր մտնելիություն: Ըստ մաշակայունության և գունային համադրությաննրանք համապատասխանում են երեսացու գործվածքին: Լավագույն աստառացու գործվածքներն են.</p>

	<ul style="list-style-type: none"> • Վիսկոզային, • Կապրոնային, • Բամբակյա խառնուրդային գործվածքները:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է տեսական ուսուցման և գործնական պարապմունքի ձևով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, գործվածքի նմուշներ, ձևանմուշներ, մկրատ և ձևման այլ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում՝ 2 ժամ Գործնական պարապմունք՝ 4 ժամ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է շարադրում աստառացու գործվացքներին ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է ընտրում աստառացու գործվածքը, 3) ճիշտ է ձևում աստառը ըստ տրված ձևանմուշի, 4) աստառի ձևման ընթացքում էական սխալներ թույլ չի տալիս:
Ուսումնառության արդյունք 2	Մշակել աստառը՝ համաձայն մոդելի
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում կարատեսակները, 2) պահպանում է կարերի կատարմանը ներկայացվող տեխնոլոգիական պարամետրերը՝ <ul style="list-style-type: none"> • 1սմ կարաշարքում կարակույթերի թիվը, • կարաշարքի հեռավորությունը եզրից, • ասեղի և թելի համապատասխանությունը գործվածքի հաստությանը 3) սեղմոնների և կոնստրուկտիվ կարերի համապատասխանեցումը կատարում է ըստ արտադրանքի կոնստրուկցիայի և նշանակության, 4) աստառի պատրաստման հերթականությունը համապատասխանում է տեխնոլոգիական պահանջներին:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվի ձևաձև, մշակելու տրված արտադրատեսակների աստառները: Նա պետք է մշակի աստառը՝ պահպանելով կատարման կանոնները: Աստառի խմբի գործվածքները մշակման ժամանակ ներկայացնում են որոշակի բարդություն, քանի որ սահուն են, բաղադրության մեջ ունեն հիմնականում կապրոնյա մանրաթելեր, որոնք շփման ժամանակ տաքանում են, հետքաբար կարման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ուղղորդ ձողեր, ասեղի հովացման մեխանիզմ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է մշակել նշված

	արտադրատեսակների աստառները, պահպանել է կարման հաջորդականությունը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է գործնական պարապմունքի ձևով: Ուսուցումը իրականացվում է գործնական պարապմունքի ձևով, կարի արհեստանոցում, որտեղ առկա են աստառի խմբի գործվածքների մշակման համար բոլոր սարքավորումները:
Ուսուցման ժամաքանակը	Գործնական 8 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Կատարել աստառի վերջնական ջերմախոնավային մշակում
Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ընտրում ջերմախոնավային մշակման սարքավորումները, 2) մշակման արդյունքում թերություններ թույլ չի տալիս:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվի մշակված աստառներ՝ կատարելու վերջնական ջերմախոնավային մշակման պարապմունքներ: Աստառի միացման կարերը, որպես կանոն, արդուկվում են միակողմանի: Պիջակների, բաճկոնների մոտ աստառի փեշը մշակվում է երեսացուին միացված: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարել վերջնական ջերմախոնավային մշակման աշխատանքները, ճիշտ է ընտրել սարքավորումները և համապատասխան ռեժիմը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ձեռքբերումը կատարվում է գործնական պարապմունքի ձևով: Գործնական պարապմունքը կատարվելու է կարի արհեստանոցում, որտեղ առկա են վերջնական հարդարման համար անհրաժեշտ սարքավորումներ:
Ուսուցման ժամաքանակը	Գործնական 4 ժամ
ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԴՐԱՎԱՐՏԻՔԻ ՄՇԱԿՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԿԱՏԴ 3-14-006
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհատական պատվերի հիման վրա անդրավարտիք կարելու, ձևափոխելու, նորոգելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում անդրավարտիք մշակելու բոլոր օպերացիաները
Մոդուլի տևողությունը	40 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ

	Գործնական պարապմունք՝ 36 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿԱՏԴ 3-14-003 «Մանր մասնիկների մշակում», ԿԱՏԴ 3-14-004 «Գրպանների մշակում» և ԿԱՏԴ 3-14-005 «Աստառի մշակում» մոդուլները:
Ուսումնառության արդյունքները	<ol style="list-style-type: none"> 1) Անդրավարտիք կարելու համար ընտրել գործվածքը, կատարել էսքիզ, վերցնել չափերը, կատարել համապատասխան հաշվարկներ 2) Ձևել գործվածքն ըստ մոդելի՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները 3) Ձևել և մշակել մասնիկները 4) Նախապատրաստել չափափորձի և կարել անդրավարտիքը 5) Նախապատրաստել չափափորձի և կարել անդրավարտիքը
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Անդրավարտիք կարելու համար ընտրել գործվածքը, կատարել էսքիզ, վերցնել չափերը, կատարել համապատասխան հաշվարկներ
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է ընտրում անդրավարտիք կարելու համար նախատեսվող գործվածքը՝ համաձայնեցնելով պատվիրատուի հետ, 2) Ճիշտ է կատարում էսքիզն՝ ըստ մոդելի, 3) Ճիշտ է վերցնում պատվիրատուի չափերը և ճիշտ է կատարում համապատասխան հաշվարկները:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվի առաջադարանք, կատարել էսքիզ պատվիրատուի պահանջներին համապատասխան՝ հիմնավորել գործվածքի համապատասխանությունը նմուշին, վերցնել պատվիրատուի չափսերը, կատարել համապատասխան հաշվարկներ: Անհատական պատվերով հագուստը, այս դեպքում անդրավարտիքը, պատրաստվում է կոնկրետ պատվիրատուի մարմնի վրա, պատվիրատուի հետ հանդիպման ժամանակ դերձակը ուսումնասիրում է պատվիրատուի առաջարկությունները, օգնում է ճիշտ ընտրել նմուշը, և համապատասխան օժանդակ նյութերը: Գործվածք ընտրելիս հաշվի է առնվում անդրավարտիքի նշանակությունը, պատվիրատուի տարիքը, նախասիրությունները, սեզոնը, նորաձևության ուղղությունը: Դերձակը պատվիրատուից վերցնում է անհրաժեշտ չափումները, հաշվի առնելով մարմնակազմական շեղումները տիպային չափսերից, ուրվանկարում է

	<p>նմուշը, կատարում է համապատասխան հաշվարկներ՝ օգտվելով չափումների և հավելումների աղյուսակից: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է վերցրել պատվիրատուի չափսերը, հիմնավորել է գործվածքի համապատասխանությունը նմուշին, հաշվարկը ճիշտ է կատարել:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքի ձևով: Պարապմունքի ընթացքում անհրաժեշտ են մանեկեններ, նորաձևության ամսագրեր, մասնագիտական գրականություն, չափումների աղյուսակ, սանտիմետրական ժապավեն:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական 6 ժամ:</p>
<p>Ուսումնառության արդյունք 2</p>	<p>Կատարել անդրավարտիքի հիմքի գծագիրը՝ հաշվի առնելով չափահասակային տվյալները</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) Ճիշտ է կատարում անդրավարտիքի հիմքի գծագիրը, 2) Ճիշտ է մոդելավորում հիմքի գծագիրը, 3) Ճիշտ է պատրաստում անդրավարտիքի լեկալները ըստ պատվիրատուի էսքիզի, 4) Ճիշտ է նախապատրաստում գործվածքը ձևման, 5) լեկալները ճիշտ է տեղադրում գործվածքի վրա:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Ըստ համապատասխան չափումների և հաշվարկների ուսանողը կատարում է անդրավարտիքի հիմքի գծագիրը: Մոդելավորում է ըստ պատվիրատուի ներկայացրած էսքիզի: Պատրաստում է անդրավարտիքի բոլոր լեկալները տեղադրում է գործվածքի վրա և կավճագծում: Պահպանել է հենքաթելի ուղղությունը: Հիմքի գծագիրը կատարվում է օգտվելով համապատասխան գրականությունից և կատարված հաշվարկներից: Նախագիծը կատարվում է առանձին-առանձին կիսամասերի և մանր մասնիկների համար: Մոդելավորումը կատարվում է ելնելով պատվիրատուի առաջարկած էսքիզից: Լեկալների պատրաստման ժամանակ հաշվի է առնվում գործվածքի կարման հատկությունները՝ կարաբաժինները և կարման բաժինները տրվում են ելնելով մասնիկի կոնստրուկցիայից և կարվող տեղամասից: Լեկալի վրա նշվում են անվանումը, հենքի թելի ուղղությունը, չրթվածքները տրվում են 3-5 մմ խորությամբ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է պատրաստել լեկալերը և ճիշտ է տեղադրել գործվածքի վրա:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսության և գործնական պարապմունքի ձևով: Գործնական պարապմունքի կատարման ընթացքում անհրաժեշտ է մասնագիտական գրականություն, չափումների աղյուսակ,</p>

	ստվարաթուղթ, միլիմետրական թուղթ, պոլիէթիլենային թաղանթ, մատիտ, քանոն և այլն:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում` 2 ժամ Գործնական պարապմունք` 10 ժամ
Ուսումնառության արդյունք 3	Ձևել և մշակել մասնիկները
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) մասնիկներն ձևում է խնամքով` կավճագծմանը համապատասխան, 2) ճիշտ է կոմպլեկտավորում մասնիկները, 3) ճիշտ է կատարում բոլոր մասնիկների մշակումը` ըստ մոդելի, 4) անդրավարտիքի պատրաստման հերթականությունը համապատասխանում է տեխնոլոգիական պահանջներին, 5) անդրավարտիքի հավաքումը ճիշտ է կատարում:
Գնահատման միջոցը	Ուսանողին կտրվի նախապատրաստած գործվածքը, որի վրա դասավորված են կավճագծված բոլոր լեկալները: Նա պետք է ձևի անդրավարտիքը և նախապատրաստի կարման: Պետք է ճիշտ շարադրի անդրավարտիքի մասնիկների մշակման և հավաքման հաջորդականությունը: Մասնիկների ձևումը կատարվում է կավճագծման եզրերով, մանր մասնիկները ձևվում են չափափորձումից հետո: Մասնիկների կոմպլեկտավորումից հետո կատարվում է սեղմոնների, գրպանների եզրերի տեղափոխում հաջորդ շերտ` պատճենահանման գծերով: Բարակ գործվածքների հեր աշխատելիս` կիրառվում են քորոցներ: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ճիշտ է ձևել մասնիկները և ճիշտ է շարադրել մշակման հաջորդականությունը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսության և գործնական պարապմունքի ձևով: Գործնական պարապմունքի կատարման ընթացքում անհրաժեշտ է մասնագիտական գրականություն, մկրատ և ձևման համար նախատեսված այլ պարագաներ:
Ուսուցման երաշխավորված ժամաքանակը	Տեսական ուսուցում` 2 ժամ Գործնական պարապմունք` 8 ժամ
Ուսումնառության արդյունք 4	Նախապատրաստել չափափորձի
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) բոլոր ձեռքի կարերը ճիշտ է կատարում, 2) չափափորձի ընթացքում արտադրանքը հստակ նստեցնում է պատվիրատուի մարմնի վրա:
Գնահատման միջոցը	Ուսանողը կատարում է չափափորձում մանեկենի կամ պատվիրատուի վրա, վերացնում է թերությունները,

	<p>նախապատրաստում կարման: Ճիշտ է կատարված չափափորձումը՝ ապահովված է նստեցումը մարմնի վրա: Անդրավարտիքի մշակման հաջորդականությունը բաղկացած է հետևյալ փուլերից.</p> <ul style="list-style-type: none"> • Առանձին կիսամասերի միացում ժամանակավոր կարաշարքով, ըստ տրված կարաբաժինների, • Չափափորձման կատարում, մասնիկների ճշտում, ուղղում <p>Մանր մասնիկների մշակումը կատարվում է առանց չափափորձման: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ձեռքի կարերը ճիշտ է կատարված, պահպանված են կարման կանոնները:</p>
<p>Մեթոդաբանությունը և ռեսուրսները</p>	<p>Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքի ձևով: Գործնական պարապմունքի կատարման ընթացքում անհրաժեշտ է մասնագիտական գրականություն, մկրատ, թելեր, ասեղ, մանեկեն, մոդելի ուրվանկարը, քորոցներ, սանտիմետրական ժապավեն, կավիճ, քանոն:</p>
<p>Ուսուցման երաշխավորված ժամաքանակը</p>	<p>Գործնական 6 ժամ:</p>
<p>Ուսումնառության արդյունք 5</p>	<p>Կարել անդրավարտիքը</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ol style="list-style-type: none"> 1) վերացնում է չափափորձի ընթացքում նկատված թերությունները, 2) մեքենայական կարատեսակները ընտրում է ճիշտ, 3) անդրավարտիքի պատրաստման հերթականությունը համապատասխանում է տեխնոլոգիական պահանջներին, 4) ճիշտ է կատարում վերջնական հարդարման պարապմունքները, 5) ճիշտ է ենթարկում վերջնական ջերմախոնավային մշակման:
<p>Գնահատման միջոցը</p>	<p>Ուսանողը կատարում է անդրավարտիքի առանձին մասերի մշակում և հավաքում: Ընտրում է համապատասխան մեքենայական կարատեսակները, պահպանում է կարման տեխնոլոգիական պարամետրերը՝ կարաշարքի հեռավորությունը եզրից, 1սմ. կարաշարքում եղած կարակուրթերի թիվը, ասեղի և թելի համապատասխանությունը գործվածքին: Կատարում է անդրավարտիքի վերջնական հարդարման պարապմունքներ: Մքենայական կարերը կատարվում են վերջնական չափափորձումից հետո՝ պահպանելով կարման տեխնոլոգիական պարամետրերը.</p> <ul style="list-style-type: none"> • 1 սմ կարաշարքում եղած կարակուրթերի թիվը, • Կարաշարքի հավասարաչափ հեռավորությունը եզրից, • Ասեղի թելի համապատասխանությունը գործվածքի հաստությանը: <p>Մասնիկների մշակման և միացման ժամանակ կատարվում է միջօպերացիոն և վերջնական</p>

	խոնավաջերմային մշակում, պահպանելով համապատասխան ռեժիմ ըստ գործվածքի բաղադրության: Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարել մեքենայական աշխատանքները և ճիշտ է հարդարել արտադրանքը:
Մեթոդաբանությունը և ռեսուրսները	Արդյունքի ուսուցումը կատարվում է գործնական պարապմունքի ձևով՝ կարի արհեստանոցում, որտեղ առկա են բոլոր համապատասխան մեքենասարքավորումները: Գործնական պարապմունքի կատարման ընթացքում անհրաժեշտ են կարի մեքենաներ, թելեր, ջերմախոնավային մշակման սարքեր:
Ուսուցման ժամաքանակը	Երաշխավորված Գործնական 6 ժամ:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՎԵՐՆԱՇԱՊԻԿԻ ՄՇԱԿՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ԿԱՏԴ 3-14-007
Մոդուլի նպատակը	Այս մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհատական պատվերի հիման վրա վերնաշապիկ կարելու, ձևափոխելու, նորոգելու կարողություններ՝ ներառյալ մեքենայական արտադրամասում վերնաշապիկ մշակելու բոլոր օպերացիաները:
Մոդուլի տևողությունը	36 ժամ Տեսական ուսուցում՝ 4 ժամ Գործնական պարապմունք՝ 32 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել ԿԱՏԴ 3-14-003 «Մանր մասնիկների մշակում», ԿԱՏԴ 3-14-004 «Գրպանների մշակում»
Ուսումնառության արդյունքները	1) Վերցնել պատվիրատուի չափսերը, ստուգել գործվածքի որակը, կատարել համապատասխան հաշվարկներ և վերնաշապիկի էքիզը 2) Ձևել գործվածքը ըստ մոդելի 3) Միացնել մշակված մասնիկները 4) Արտադրանքը բերել վերջնական տեսքի
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների

	բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	Վերցնել պատվիրատուի չափսերը, ստուգել գործվածքի որակը, կատարել վերնաշապիկի էքիզը և համապատասխան հաշվարկները:
Կատարման չափանիշներ	1) Ճիշտ է կատարում պատվերի ձևակերպումը, 2) Ճիշտ է վերցնում չափերը, կատարում էքիզը:
